ԱՐԱՋ ԱԼԻԶԱԴԵ.
«Եթե Մոսկվան չմիջամտեր»

«Հյուրիյեթ», հունիսի 15.- Ադրբեջանի սոցիալ-դեմոկրատական կուսակցության ղեկավար Արազ Ալիզադեն անդրադառնալով Ղարաբաղի հարցին, որի պատճառով տարիների լարվածությունը Հայաստանի ու Ադրբեջանի միջև վերջերս վերածվել է քաղաքացիական պատերազմի, արտահայտեց այն տեսակետը, թե երկու հանրապետություններն ի վիճակի են համատեղ ջանքերով լուծել այն: Նա ասաց, որ. *«Հարցը մենք իրոնքներս կլուծենք, միայն թե Մոսկվան Ղարաբաղի գործերին չմիջամտի: Ղարաբաղը կենտրոնի ձեռին մի գործիք է, որի միջոցով փորձ է արվում Ադրբեջանն ու Հայաստանը սերկական կախվածության մեջ պահել Մոսկվայից: Մենք կարող էինք, երկխոսության մեջ մտնելով միմյանց հետ, օրինականության սահմաններում լուծել երկու հանրապետությունների միջև կովախնձոր դարձած Ղարաբաղի հարցը»:*

Ալիզադեն սոցիալիստական ինտերնացիոնալի խորհրդակցությանը մասնակցելու համար ժամանել է Ստամբուլ: Նա տեղեկություններ տվեց Ադրբեջանի սոցիալ-դեմոկրատական կուսակցության մասին եւ նշեց, որ օրեցօր աճող այդ կուսակցությունը հիմնադրված լինելով 1979 թվականին, պաշտոնապես գրանցվել է 1989 թվականի դեկտեմբերի 10-ին: Ադրբեջանի սոցիալ-դեմոկրատական կուսակցության ղեկավարն ասաց, որ իրենք Իրանական Ադրբեջանի կամ էլ Թուրքիայի ադրբեջանցիների հետ միավորվելու որեւէ նպատակ չեն հետապնդում, պարզապես ցանկանում են հասնել ազատ, այդ թվում նաեւ Մոսկվայից անկախ գոյավիճակի: Այն հարցին, թե ինքը ինչ վերաբերմունք ունի դեսպան Վոլֆան Վուրաղի Հայաստան կատարած այցից, նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի հետ նրա հանդիպումից հետո Անկարայի ու Երեւանի միջեւ առաջացած ջերմ մթնոլորտի մասին, ասաց հետեւյալը. *«Թուրքիան քաղաքական պետություն է եւ կարող է փոխհարաբերությունների մեջ մտնել ցանկացած երկրի հետ»:* ■